# Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում սիրեցյալ մեր ժողովրդի բոլոր զավակներին Ավետման շնորհաբաշխ տոնի բերկրալի առիթով և շնորհավորում բոլոր կանանց Մայրության և գեղեցկության օրվա կապակցությամբ:

Մեր աղոթքն ու հայցն է, որ Գաբրիել հրեշտակապետի կողմից Սուրբ Աստվածածնին տրված Ավետիսը՝ «Ուրախացիր, ով շնորհընկալ, Տերը քեզ հետ է», Աստծո Սիրո փրկարար խորհրդով, նորոգիչ ու կենսապարգև իր զորությամբ բնակություն հաստատի ընտանեկան բոլոր հարկերից ներս:

Թող Սուրբ Աստվածածնի գթառատ բարեխոսությամբ Միածին Որդին մայրության շնորհով զարդարի բոլոր կանանց և խաղաղության ու բարօրության մեջ պահպանի մեր մայրերին ու քույրերին՝ միշտ խինդով լցնում ու երջանիկ, միշտ գեղեցիկ՝ օրհնված առաքինություններով ու բարեգործությամբ:

*«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն»:*

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
6 ապրիլի 2002 թ.